ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամ,
իրավաբանական գիտությունների դոկտոր
Գևորգ Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան.

Կարդալով Ձեր հարցազրույցը «Գոլոս Արմենիի» (23 հուլիսի 2015 թ.) թերթում՝ «Քաղաքացիները հակակշիռ կդառնան Խորհրդարանին», ես հիշեցի հետևյալ խոսքերը Նոր Կտակարանից. «Երանի նրանց ովքեր չեն տեսել, սակայն կհավատան»:

Մի՞թե Դուք իրոք հավատում եք, որ իշխանությունը թույլ կտա քաղաքացիներին հակակշիռ լինել իրեն:

Օրինակների համար հեռուն գնալ պետք չէ: Խնդրում եմ հիշեք, թե արդարադատության նախարար եղած ժամանակ ինչպես էիք ՀՀ Ազգային ժողովում «ուզում անցկացնել» «ՀԿ-ների մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» «կիսահում» օրինագիծը: Այդ օրինագծին դեմ էին արտահայտվել 200-ից ավելի հասարակական կազմակերպություններ, սակայն Դուք մնացիք անդրդվելի:

Բայց այդ մասին ավելի ուշ: Խոսենք սահմանադրական բարեփոխումների նախագծի մասին:

Որպես մեր հասարակության սովորական քաղաքացի, չմասնակցելով որևէ քաղաքական կամ հասարակական շարժման, դիմում եմ Ձեզ՝ խնդրելով պատասխանել ստորև հարցերին. արդյոք սահմանադրական բարեփոխումների նախագիծն ապահովո՞ւմ է հետևյալ չափանիշները.

- Պետության անկախություն.
- Պետության տարածքային ամբողջականություն.
- Ազգային ինքնություն.
- Պետական և հասարակական կարգի ժողովրդավարացում.
- Երկրի քաղաքացիների ապահովություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս.
- Քաղաքացիների հիմնարար ազատությունների պաշտպանություն.
- Մարդու իրավունքների պաշտպանություն.

- Շրջակա միջավայրի պաշտպանություն և պետության ջրային, հողային և բնական պաշարների օգտագործման արդյունավետություն.
- Երկրի ազգային անվտանգություն հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային ոլորտներում:
- Իշխանության համապատասխան ճյուղերի իրական բաժանում և անկախություն (հատկապես դատականի ճյուղի):

Արդյո՞ք հանրային լայն քննարկման ներկայացված սահմանադրական բարեփոխումների նախագիծն ընդհանուր առմամբ բավարարում է «անհրաժեշտ և բավարար» պայմանին:

Ձեզ շատ երախտապարտ կլինեի սպառիչ պատասխանների համար, սակայն խնդրում եմ խուսափել ամբոխահաճո ոգուց: Հուսով եմ, որ Դուք՝ որպես սահմանադրական բարեփոխումների նախագծի համահեղինակ, կարող եք լիարժեք պատասխաններ տալ ներկայացված հարցերին:

Բացի այդ, երկրի համար հիմնարար փաստաթղթի նախագծի քննարկումը պետք է իրականացվի մեր գոյության բոլոր ոլորտներում:

Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, տասնամյա պարբերականությամբ բարեփոխվում է: Ակնհայտ է, որ ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում Հիմնական օրենքի նման հաճախակի բարեփոխումը կարելի է ինչ-որ կերպ հիմնավորել: Սակայն, ի հայտ է գալիս մեկ այլ խնդիր՝ ունա՞կ է արդյոք մեր հանրությունը, և ամենակարևորը՝ ազգի վերնախավը կազմող նրա հասարակական-քաղաքական և պետական ու տնտեսական հատվածը, ընդունել և անառարկելիորեն իրականացնել բարեփոխված ՀՀ Սահմանադրության «տառն ու ոգին»:

«Շնորհիվ» այդ, այսպես կոչված, էլիտայի, մենք իրականում ունենք այն, ինչ ունենք...

Գալիք տասը տարիների ընթացքում ոչ մի պատժամիջոցով հնարավոր չէ փոխել հասարակությունը, և ամենակարևորը, փոխել նրա վերաբերմունքը իշխանության նկատմամբ:

Ձեր կանխատեսումներով մեր հասարակությունը կարող է վերածնվել և արմատախիլ անել այնպիսի թերություններ, ինչպիսիք են թալանը, կոռուպցիան, գավառականությունը, տեղայնությունը, ցեղա-ընտանեկան երաշխավորությունը, հովանավորչությունը, արհեստավարժության ցածր մակարդակը, ամենաթողությունը և այլն, որոնք ներկայումս այդքան բնորոշ են մեր վերնախավի ճնշող մեծամասնությանը և օրինակ են ծառայում հասարակության մնացած մասի համար:

Եվ ի՞նչ, փոխելով Սահմանադրությունը, մենք կփոխե՞նք ստեղծված իրավիճակը: Այսինքն, միանգամից.

- Որակապես կփոխվի՞ հասարակական-քաղաքական «բոմոնդը»:
- Կգտնվի՞ բարձրաստիճան պաշտոնյա, որն իր սեփական կամքով հրաժարական կտա իր հակաօրինական գործունեության համար:
- Բարձրաստիճան պաշտոնյաները կսկսե՞ն անձնական պատասխանատվություն կրել իրենց անօրինական գործողությունների համար:
- Բյուրոկրատական խավը կդադարեցնի՞ օգտագործել պետական միջոցները հանուն իր պատվամոլության և հարստացման:
- Եվ այլն:

ՀՀ Սահմանադրությունը պետք է իրականացվի առանց ստորադասական եղանակի (սա քերականությունից է):

Հայրենական հասարակական-քաղաքական և պետական ու տնտեսական վերնախավը սովոր չէ անկեղծորեն, առանց կեղծիքի, խոսել ժողովրդի հետ: Նա ապրում է այլ հարթություններում, որտեղ ՀՀ Սահմանադրությունը երկրի Հիմնական օրենքը չէ, և յուրաքանչյուր պաշտոնյա պարտավոր է հարգել և գործնականում իրականացնել իր՝ վերնախավի պահանջները:

«Մեծ հաշվով» սովորական բնակչին քիչ է հետաքրքրում, թե ինչ ձևով է իրականացվում երկրի կառավարումը՝ խորհրդարանական թե՞ նախագահական: Նրա միակ խնդիրն է՝ արդյոք պետությունը՝ հանձին գործադիր իշխանության, ի զորու է լինել իր ազատության և իրավունքների երաշխավորը:

Հ.Գ. Երկրում մշակվել է մի պրակտիկա, երբ որոշ հիմնարար օրինագծեր ուղարկվում են Վենետիկի հանձնաժողով («Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով): Այդպես է եղել ՀՀ Սահամանդրության բոլոր նախորդ նախագծերի հետ: Հետաքրքիր է, արդյոք մեր փորձագետներին բացատրո՞ւմ ենք՝ երկրի Հիմնական օրենքի նման հաճախակի փոփոխությունների էությունն ու պատճառները:

Անկեղծ հարգանքով՝

Լևոն Ներսիսյան

Սախարովի կենտրոնի տնօրեն